# ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ 2019
## ՀԱՅԱՍՏԱՆ

*10 հունիսի, 2020թ.*

## ԱՄՓՈՓԻՉ ԱԿՆԱՐԿ

Սահմանադրությամբ ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այն ճանաչում է Հայաստանյայց առաքելական եկեղեցին (ՀԱԵ) որպես ազգային եկեղեցի և ազգային ինքնության պահպանող, բայց նաև սահմանում է, որ «կրոնական կազմակերպություններն» անջատ են պետությունից: Օրենքն արգելում է, սակայն չի սահմանում հոգեորսությունը, որ կարող է օգտագործվել հարկադիր կրոնափոխություն իմաստով: Շարունակվել է բահայի հայտնի իրավաբանի գործով դատավարությունը, որին մեղադրանք էր ներկայացվել 2017թ. դեպի երկիր անօրինական միգրացիա կազմակերպելու համար: Բահայի համայնքի անդամները հավատացած էին, որ մեղադրանքի պատճառը նրա կրոնն է: Ըստ «ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեին ներկայացվող այլընտրանքային զեկույց. եզդի երեխաների իրավունքների իրացումը Հայաստանում» զեկույցի հաճախ խախտվում է փոքրամասնությունների երեխաների կրոնական ազատությունը և կան դժվարություններ նրանց էթնիկ և կրոնական ինքնության պահպանության ու արտահայտման հետ կապված: Կրոնական կազմակերպության հարելու պատճառով ոստիկանին աշխատանքից ազատելու դեպքը, որ գրանցվեց 2018թ., Սահմանադրական դատարանի կողմից ոստիկանության ծառայողներին կրոնական կազմակերպություններին անդամակցելու արգելքներ սահմանող օրենքները վերանայելու առիթ դարձավ: Կային հաղորդումներ, որ կառավարությունը կամայականորեն է կիրառել օրենքը՝ թիրախավորելով փոքրամասնական կրոնական խմբերի հետ կապ ունեցող ոստիկաններին: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը խոսեց կրոնական ազատության կարևորության մասին և ձևավորեց աշխատանքային խումբ՝ քննարկելու ՀԱԵ-կառավարություն հարաբերությունները, վերանայելու հանրակրթական դպրոցներում Հայոց եկեղեցու պատմության դասավանդման առարկայական ծրագիրը և այլ հարցեր: ՀԱԵ որոշ ներկայացուցիչներ առարկություններ ունեին այս վերանայման վերաբերյալ՝ բնութագրելով այն որպես սպառնալիք ազգային ինքնությանը: Սեպտեմբերին Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքում բացվեց աշխարհում ամենամեծ եզդիական տաճարը, որը կառուցվել է մասնավոր ֆինանսավորմամբ մասնավոր հողատարածքում: Բացման միջոցառման ժամանակ հանդես գալով Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը նշեց. «Խորհրդանշական և տրամաբանական եմ համարում, որ աշխարհում ամենամեծ

եզդիական տաճարը գտնվում է հենց Հայաստանում: Հայաստանը տուն է եզդի ժողովրդի համար»: Տաճարի բացման ժամանակ հարցազրույց տված եզդիները նշում էին, որ սրբատեղի կառուցումը եզդիական մշակույթի պահպանությանն ուղղված կարևոր քայլ է, իսկ ոմանք էլ նշում էին, որ տաճարի բուն նպատակը, թերևս, զբոսաշրջիկների ներգրավումն է:

Կրոնական փոքրամասնությունները նշում էին, որ շարունակել են բախվել ատելության խոսքին ու իրենց համայնքների բացասական կերպարի խնդրին, հատկապես՝ սոցիալական ցանցերում: Ըստ դիտորդների սոցիալական հարթակներում հայտնվել են հակահրեական գրառումներ, որոնք որոշ դեպքերում զուգորդված են եղել ծաղրանկարներով, որտեղ հրեաները վիրավորական կերպով են ներկայացվել: Ըստ Եհովայի վկաների իրենց անդամների նկատմամբ կրկին հասարակության կողմից վիրավորական արտահայտություններ թույլ տալու միջադեպեր են եղել, որին իրավասու մարմիններն արձագանքել են օպերատիվ ու պատշաճ կերպով: Տարվա ընթացքում վիրավորանք հասցնելու 16 միջադեպ է գրանցվել, մինչդեռ 2018թ. գրանցվել էր 12 դեպք: Նոյեմբերին ՀԱԵ հոգևորականի կողմից ՀԱԵ կայքում մի հոդված հրապարակվեց, որտեղ նա խոսում էր Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու ( Հիսուս Քրիստոսի եկեղեցու), Եհովայի վկաների, Յոթերորդ օրվա ադվենտիստների, հիսունականների ու բողոքականների և մյուսների մասին՝ որպես «աղանդների»: Նա նշել էր. «աղանդավորական կազմակերպությունները վնասում են մեր ազգին՝ բաժանումներ ստեղծելով ժողովրդի մեջ, հեռացնելով նրանց Սուրբ եկեղեցուց և մեր նախնիների իրական հավատքից»: Հասարակության և ընտանիքի կողմից եկող ճնշումները էթնիկ հայերի համար շարունակում էին մնալ նշանակալի հետ պահող գործոն ՀԱԵ-ից զատ այլ կրոնի դավանելու հարցում:

Դեսպանը և ԱՄՆ դեսպանության այլ պաշտոնյաներ շարունակել են պետական պաշտոնյաների հետ իրենց հանդիպումներում խթանել կրոնական հանդուրժողականությունը, կրոնական փոքրամասնությունների նկատմամբ հարգանքը ու միջդավանական երկխոսությունը:Դեսպանության պաշտոնյաները հանդիպել են ՀԱԵ-ի առաջնորդների հետ՝ քննարկելու կրոնական փոքրամասնությունների կողմից առանց սահմանափակումների իրենց հավատքներին դավանելու իրավունքը: Օգոստոսին դեսպանն ընդունելություն կազմակերպեց կրոնական և էթնիկ փոքրամասնությունների, քաղաքացիական հասարակության և կառավարության ներկայացուցիչների համար՝ նպաստելու միջկրոնական երկխոսությանը, փոխադարձ հարգանքին և համագործակցությանը: Սեպտեմբերին դեսպանը կենտրոնական ու տեղական իշխանությունների ներկայացուցիչների հետ միասին տոնեց ԱՄՆ կառավարության ֆինանսավորմամբ իրականացված մշակութային պահպանության ծրագրի ավարտը, որի շրջանակում պահպանության աշխատանքներ էին իրականացվել Սյունիքի մարզի Մեղրի համայնքում գտնվող ՀԱԵ-ին պատկանող Սուրբ Հովհաննես եկեղեցում և վերականգնվել էին այնտեղ գտնվող 17-րդ դարի որմնանկարները: Դեսպանությունն

օգտագործում է ֆեյսբուքյան և թվիթերյան հարթակները՝ կրոնական հանդուրժողականությանն աջակցող ուղերձներ տարածելու համար: Դեսպանը և դեսպանության այլ պաշտոնյաները երկրում կրոնական ազատության հետ կապված իրավիճակը քննարկելու նպատակով պարբերաբար հանդիպել են փոքրամասնական կրոնական խմբերի հետ, այդ թվում՝ ավետարանական քրիստոնյաներ և այլ բողոքականներ, Եհովայի վկաներ, Հիսուս Քրիստոսի եկեղեցու հետևորդներ, եզդիներ, հրեական համայնք, առաքելական ասորիներ, հիսունականներ և բահայիներ, ինչպես նաև մահմեդականություն դավանող անհատներ:

## ՄԱՍ I. ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՄՆ կառավարության գնահատմամբ ընդհանուր բնակչությունը կազմում է շուրջ 3.0 միլիոն (2019թ. կեսերի դրությամբ): Ըստ 2011թ. մարդահամարի բնակչության մոտ 92 տոկոսն իրեն բնորոշում է որպես հայ-առաքելական: Մյուս կրոնական խմբերը ներառում են. Հռոմեական կաթոլիկներ, Հայկական Մխիթարյան միաբանության անդամ կաթոլիկներ, ուղղափառ քրիստոնյաներ, ավետարանական քրիստոնյաներ, այդ թվում՝ Հայկական ավետարանական եկեղեցու հետևորդներ, հիսունականներ, յոթերորդ օրվա ադվենտիստներ, բապտիստներ, խարիզմատիկ քրիստոնյաներ և Եհովայի վկաներ: Կան նաև Հիսուս Քրիստոսի եկեղեցու և Արևելքի ասորական կաթողիկոսության սուրբ առաքելական եկեղեցու հետևորդներ, քրիստոնյա-մոլոկաններ, եզդիներ, հրեաներ, բահայիներ, սունի մահմեդականներ, շիա մահմեդականներ և հեթանոսներ, որոնք նախաքրիստոնեական դավանանքի հետևորդ են: Միջազգային հանրապետական ինստիտուտի (ՄՀԻ) 2018թ. հարցման տվյալներով բնակչության 94 տոկոսն իրեն համարում է հայ-առաքելական, 2 տոկոսը՝ կաթոլիկ (բոլոր ենթաուղղություններ), 3 տոկոսը՝ այլ կրոնի և 1 տոկոսը՝ կրոն չունեցող: Մայիսին անցկացված ՄՀԻ հարցման տվյալներով բնակչության 94 տոկոսը հայ-առաքելական են, 4 տոկոսը՝ այլ, 1 տոկոսը՝ կրոն չունեցող, իսկ կաթոլիկների մասին առանձին հիշատակում չկա: Հրեական համայնքի տվյալներով հրեաների թիվը երկրում մոտ 800-1.000 հոգի է:

2011թ. մարդահամարի տվյալներով երկրում բնակվում են ավելի քան 35.000 եզդի, չնայած վերջին շրջանի որոշ գնահատումներով այս թիվը կազմում է շուրջ 50.000 հոգի: Եզդիները հիմնականում կենտրոնացված են Արագած լեռան շրջանում գտնվող գյուղական բնակավայրերում՝ մայրաքաղաք Երևանից դեպի հյուսիս-արևմուտք: Հայ կաթոլիկները հիմնականում բնակվում են հյուսիսում: Մահմեդականները հիմնականում շիաներ են, այդ թվում՝ իրանցիներ և ժամանակավոր կացություն ունեցող անձինք Միջին Արևելքից, և բնակվում են Երևանում:

# ՄԱՍ II. ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ՀԱՐԳԱՆՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

## *Իրավական դաշտ*

Սահմանադրությամբ ամրագրվում է, որ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով պաշտամունքի ծիսակատարություններով՝ օրինակ՝ քարոզ կամ եկեղեցական արարողություններ, արտահայտելու ազատությունը: Սահմանադրությունը թույլ է տալիս սահմանափակել այս իրավունքը պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Սահմանադրությունը սահմանում է, որ «կրոնական կազմակերպություններն» անջատ են պետությունից: Այն ճանաչում է «Հայաստանյայց առաքելական եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում»: Սահմանադրությամբ արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը կրոնական ատելություն բորբոքելու նպատակով: Այն թույլ է տալիս, որ այն անձինք, ում կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայությունը, անցնեն այլընտրանքային քաղաքացիական ծառայություն:

Օրենքն արգելում է, սակայն չի սահմանում «հոգեորսությունը», եզրույթ, որն օգտագործվում է բնութագրելու թե' դավանափոխությունը, և թե' հարկադիր կրոնափոխությունը: Օրենքն արգելում է, որ երկրից դուրս գտնվող հոգևոր կենտրոններ ունեցող կրոնական կազմակերպությունները ֆինանսավորում ստանան այդ արտաքին կենտրոններից. այնուհանդերձ օրենքի այս պահանջն իրագործելու մեխանիզմ չկա: Օրենքը նաև արգելում է կրոնական կազմակերպությունների ֆինանսավորումը կուսակցությունների կողմից և կուսակցությունների ֆինանսավորումը կրոնական կազմակերպությունների կողմից:

Օրենքը չի սահմանում կամ կարգավորում օտարերկրացի կրոնական կամավորների կացության կարգավիճակը:

Օրենքի համաձայն գրանցված կրոնական խմբերը կարող են ապահովել իրենց հավատացյալների հոգևոր-կրոնական կարիքների ու պահանջմունքների բավարարումը. կատարել կրոնական ժամերգություններ, ծեսեր ու արարողություններ, ստեղծել կրոնական ուսուցման խմբեր, զբաղվել աստվածաբանական, կրոնական և պատմամշակութային ուսումնասիրություններով, պատրաստել հոգևորական ծառայության կամ գիտական ու մանկավարժական կադրեր, ձեռք բերել և օգտագործել կրոնական նշանակության առարկաներ ու նյութեր,

օգտվել լրատվության միջոցներից, կապեր հաստատել այլ երկրների եկեղեցական կազմակերպությունների հետ և զբաղվել բարեգործությամբ: Օրենքը կրոնական խմբերի գրանցման պահանջ չի սահմանում, սակայն գրանցումն անհրաժեշտ է խմբի անունից գործարքներ կատարելու համար (օրինակ՝ սեփականություն ունենալ, վարձակալել գույք կամ բանկային հաշիվներ բացել): Օրենքը չի սահմանում չգրանցված խմբերի իրավունքները:

Որպես իրավաբանական անձ գրանցվելու համար կրոնական համայնքը պետք է Պետռեգիստր ներկայացնի փորձագիտական եզրակացություն Ազգային փոքրամասնությունների ու կրոնի հարցերով բաժնից առ այն, որ համայնքը համապատասխանում է օրենքի պահանջներին և հիմնված է «պատմականորեն կանոնացված որևէ սուրբ գրքի» վրա: Այն պետք է նաև «զերծ լինի նյութապաշտությունից և ուղղված լինի հոգևոր ոլորտները», ունենա առնվազն 200 չափահաս անդամ և իր ուսմունքով մտնի «համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի» մեջ: Օրենքը չի սահմանում, թե ինչ է նկատի առնվում «զերծ է նյութապաշտությունից» ասելիս և չի հստակեցնում, թե կրոնական որ համայնքներն են «համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի» մաս: Օրենքը սահմանում է, որ այս գրանցման պահանջների ցանկը, որի մասով համապատասխանությունը հաստատվում է Ազգային փոքրամասնությունների ու կրոնի հարցերով բաժնի կողմից, չի վերաբերվում այն կրոնական կազմակերպություններին, որոնք հիմնված են ազգային փոքրամասնություն ճանաչված որևէ խմբի, այդ թվում՝ ասորիների, քրդերի, ռուսների և եզդիների և այլոց կրոնի վրա: Կրոնական համայնքը կարող է Պետռեգիստրի որոշումը դատական կարգով բողոքարկվել:

Քրեական օրենսգրքով արգելվում է «կրոնի ազատության իրավունքի իրականացմանը խոչընդոտելը», որի համար սահմանվում է 200.000 ՀՀ դրամ (420 ԱՄՆ դոլար) տուգանքից մինչև կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենյակը լիազորված է զբաղվել պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման պաշտոնյաների կողմից թույլ տրված մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների, այդ թվում կրոնական ազատության խախտումներով:

Օրենքն արգելում է ոստիկանության, ԱԱԾ-ի, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, քրեակատարողական համակարգի և փրկարարական ծառայության աշխատակիցներին լինել կրոնական կազմակերպության անդամ, սակայն օրենքը չի սահմանում, թե ինչ է նշանակում «անդամակցությունը» կրոնական կազմակերպությանը: Օրենքն արգելում է ոստիկանության, զինված ուժերի և ԱԱԾ ծառայողներին, ինչպես նաև դատախազության աշխատակիցներին, մաքսային ծառայողներին, դիվանագետներին և այլ պետական, համայնքային ու քաղաքացիական ծառայողներին օգտագործել իրենց ծառայողական դիրքը «կրոնական միավորումների» շահերի համար կամ նրանց օգտին քարոզչության

համար: Օրենքով նաև արգելվում է ոստիկանների, դատախազների, այլ պետական ու քաղաքացիական ծառայողների կողմից ծառայողական պարտականությունները կատարելիս այլ կրոնական գործունեություն իրականացնելը: Թեպետ օրենքը սահմանում է «կրոնական կազմակերպությունը» որպես հավատի համատեղ դավանության, ինչպես նաև կրոնական այլ պահանջմունքների բավարարման նպատակով ստեղծված քաղաքացիների միավորում, սակայն «կրոնական միավորման» սահմանում չի տրվում: Զինծառայողն իրավունք չունի ստեղծել կրոնական միավորումներ: Իսկ եթե զինծառայողը հանդիսանում է կրոնական միավորման անդամ, ապա իրավունք չունի զինվորական ծառայության ընթացքում և ծառայակիցների շրջանում իրականացնել քարոզչական գործունեություն:

Քրեակատարողական օրենսգիրքը քրեակատարողական հաստատություններին թույլ է տալիս կրոնական արարողությունների համար հրավիրել եկեղեցականների և օգտագործել կրոնական առարկաներ ու գրականություն: Բանտարկյալները կարող են խնդրել հոգևոր աջակցություն՝ իրենց նախընտրած կրոնական խմբից: Պաշտպանության նախարարության և ՀԱԵ-ի համատեղ պայմանավորվածությամբ ՀԱԵ հոգևորականները կարող են ծառայել որպես զինվորական քահանա:

Օրենքը ՀԱԵ-ին հիվանդանոցներում, մանկատներում, գիշերօթիկ դպրոցներում, զորամասերում, և ազատազրկման վայրերում ազատ մուտքի ու մշտական ներկայացուցիչ ունենալու իրավունք է վերապահում, մինչդեռ մյուս կրոնական խմբերը կարող են ներկայացուցիչ ապահովել հիշյալ կառույցներում միայն տվյալ հաստատության ղեկավարից թույլտվություն ստանալու դեպքում: Օրենքը նաև նախատեսում է, որ պետությունը չի միջամտի ՀԱԵ-ի՝ ողջ երկրի տարածքում ազատորեն քարոզչություն իրականացնելու և իր հավատը տարածելու ազգային եկեղեցու մենաշնորհ հանդիսացող իրավունքի իրացմանը:

Օրենքը սահմանում է, որ հանրակրթական դպրոցներում ուսուցումն աշխարհիկ է, և նշում, որ «կրոնական գործունեությունը և քարոզչությունն ուսումնական հաստատություններում արգելվում են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի»: Թեպետ հանրային և մասնավոր դպրոցներում Հայոց եկեղեցու պատմություն առարկայի դասավանդումը կատարվում է դպրոցի ընտրությամբ, սակայն եթե դպրոցն ընտրում է այդ առարկան, ապա տվյալ դպրոցի բոլոր աշակերտների համար այն դառնում է պարտադիր առարկա 5-11-րդ դասարաններում. չկա աշակերտին կամ նրա ծնողին առարկայից հրաժարվելու հնարավորություն տվող դրույթ:

ՀԱԵ-ն իրավունք ունի մասնակցել Հայոց եկեղեցու պատմություն առարկայի ուսումնական ծրագրերի և դասագրքերի մշակմանը, այն դասավանդող ուսուցիչների որակավորման պահանջների սահմանմանը: Թեպետ եկեղեցին կարող է առարկան դասավանդող ուսուցիչների թեկնածություններ առաջադրել, սակայն Հայոց եկեղեցու պատմության ուսուցիչները հանդիսանում են պետական աշխատողներ: Օրենքը ՀԱԵ-ին իրավունք է շնորհում կազմակերպել կրոնական ուսուցման կամավոր

արտածրագրային դասընթացներ պետական կրթական հաստատություններում: Մյուս կրոնական խմբերը կարող են իրենց անդամների համար կրոնական ուսուցում իրականացնել իրենց պատկանող հաստատություններում, սակայն ոչ հանրակրթական ուսումնական հաստատությունների տարածքում:

Աշխատանքային օրենսդրությամբ գործատուներին արգելվում է աշխատակիցների կրոնական հայացքների մասին տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը:

Այն անձանց համար, որոնց կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայություն անցնելը, օրենքը սահմանում է պարտադիր երկամյա զինվորական ծառայության երկու այլընտրանք՝ այլընտրանքային (զենքի հետ կապ չունեցող) զինվորական ծառայություն 30 ամիս տևողությամբ կամ այլընտրանքային աշխատանքային ծառայություն 36 ամիս տևողությամբ: Այլընտրանքային ծառայությունից խուսափելը համարվում է քրեորեն պատժելի արարք, որի համար նախատեսված պատժամիջոցները պայմանավորված գործի հանգամանքներից կարող են լինել 2 ամսվա կալանքից մինչև 8 տարվա ազատազրկում:

Քրեական օրենսգրքով արգելվում է բռնության կոչերով կրոնական ատելության հրահրումը հրապարակային հայտարարությունների, լրատվության կամ հանրային դիրքն օգտագործելու միջոցով և դրա համար սահմանվում է տույժ 200.000-ից 500.000 ՀՀ դրամի սահմաններում (420-1.030 ԱՄՆ դոլար) կամ ազատազրկում 3-ից 6 տարի ժամկետով:

Երկիրը Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի մասնակից պետություն է:

## *Կառավարության գործունեությունը*

Տարվա ընթացքում բահայական համայնքի ականավոր դեմքերից մեկը՝ Էդուարդ Մանասյանը դեռևս մեղադրվում էր Հայաստանում հաստատվելու ցանկություն ունեցող իրանցիներին խորհրդատվություն ապահովելու միջոցով դեպի երկիր անօրինական միգրացիային աջակցելու մեջ: Նրան ձերբակալել և մեղադրանք էին առաջադրել 2017թ., ապա ութ ամիս նախնական կալանքի տակ գտնվելուց հետո 2018թ. հուլիսին նա ընդհանուր իրավասության դատարանի կողմից գրավով ազատ էր արձակվել: Տեղական ՀԿ-ներն ու իրավապաշտպանները մտահոգիչ էին համարում բահայական համայնքի անդամների նկատմամբ հսկողությունը նախքան Մանասյանին ձերբակալելը, ինչը թույլատրվել էր օրենքի խախտմամբ, քանի որ դրանով խախտվել էր փաստաբանական գաղտնիքը: Ապրիլին բահայական համայնքը Վերաքննիչ դատարան հակընդդեմ հայց ներկայացրեց ԱԱԾ-ի դեմ՝ նշելով, որ ԱԱԾ-ն անօրինականորեն գաղտնալսում է կիրառել՝ հետևելու բահայական համայնքի անդամին ու գրասենյակին, և օգտագործել են այդ կերպ ձեռք բերված տեղեկությունները որպես հիմք Մանասյանին մեղադրանք ներկայացնելու համար:

Ըստ Բահայական համայնքին ներկայացված փաստաթղթերի գաղտնալսելու թույլտվությունը հաստատվել է այն հիմնավորմամբ, որ Մանասյանը ղեկավարում է «կրոնա-աղանդավորական» կազմակերպություն և զբաղվում է «հոգեորսությամբ», սակայն այս հիմքերով որևէ մեղադրանք առաջ չի քաշվել:

Երկրի մասնավոր և հանրային դպրոցների մեծ մասում շարունակվել է Հայոց եկեղեցու պատմություն առարկայի դասավանդումը 5-11-րդ դասարաններում: Եղել են առանձին հաղորդումներ, որ Երևանի առնվազն մեկ հանրակրթական դպրոցում և եզդիաբնակ գյուղերի 2 դպրոցներում առարկան չի դասավանդվել:

Եզդիական համայնքի ներկայացուցիչները կրկին դժգոհություն են հայտնել Հայոց եկեղեցու պատմություն առարկայի պարտադիր լինելու վերաբերյալ, որը նրանք որակում են որպես «կրոնական ինդոկտրինացիա»: Միայն եզդի աշակերտներ ունեցող դպրոցները կարողացել են առարկան հանել իրենց առարկայացանկից, սակայն խառը դպրոցներ հաճախող եզդի երեխաները պարտադրված էին սովորել այս առարկան՝ անկախ ծնողների առարկություններից: Ըստ տեղական ՀԿ-ների կողմից դեկտեմբերին պատրաստված «ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեին ներկայացվող այլընտրանքային զեկույց. եզդի երեխաների իրավունքների իրացումը Հայաստանում» զեկույցի հաճախ խախտվում է փոքրամասնությունների երեխաների կրոնական ազատությունը և կան դժվարություններ նրանց էթնիկ և կրոնական ինքնության պահպանության ու արտահայտման հետ կապված: Զեկույցը մատնանշում էր, որ փոքրամասնությունների երեխաների կրոնական ազատության իրավունքը առավել հաճախ ոտնահարվել է դպրոցներում, հատկապես՝ հայոց եկեղեցու պատմության դասաժամերին: Ըստ զեկույցի, բացի այն, որ կրոնական փոքրամասնությունների երեխաները պարտավորված են սովորել և քննարկել այլ կրոնական համոզմունքներ, առարկան հաճախ ընդգրկում էր զուտ կրոնական պրակտիկայի տարրեր, օրինակ՝ խմբային աղոթքը, Աստվածաշնչի ընթերցանությունը, դասասենյակում եկեղեցականի ներկայությունը, դպրոցական ուղևորությունները կրոնական վայրեր և մասնակցությունը կրոնական տոնակատարություններին ու արարողություններին: Զեկույցը որպես փոքրամասնությունների երեխաների կրոնի ազատության իրավունքի իրացման մեկ այլ խոչընդոտ նշում էր լայնորեն տարածված խտրական վերաբերմունքը, այդ թվում «եզդի» բառի գործածումը որպես վիրավորանք: Այսպիսի վերաբերմունք դրսևորվել է Երևանի և այլ վայրերի այն դպրոցներում, որտեղ եզդիները սակավաթիվ փոքրամասնություն են:

ՀԱԵ-ի հետ առնչություն չունեցող որոշ կրոնական խմբեր կրկին փաստում էին, որ որևէ առարկություն չունեն հանրակրթական դպրոցներում Հայոց եկեղեցու պատմության դասավանդման վերաբերյալ, չնայած որոշներն առարկություններ ունեին աղոթքների ու խաչակնքվելու վերաբերյալ, որոնք ըստ հաղորդումների տեղի էին ունենում այս առարկայի դասաժամերին և նշում էին, որ ցանկանում են տեսնել ՀԱԵ-ից զատ այլ կրոնական խմբերի ավելի ճշգրիտ նկարագրեր: Կրթության նախարարությունը կրկին նշել է, որ տարվա ընթացքում չեն ստացվել բողոքներ Հայոց

եկեղեցու պատմության վերաբերյալ և որ իրենք ուսուցիչներին հրահանգել են պահպանել առարկայի աշխարհիկ բնույթը և զերծ մնալ կրոնական քարոզչությունից: Ըստ տարբեր փոքրամասնական կրոնական խմբերի փոքրամասնության երեխաների նկատմամբ դասասենյակում ցուցաբերվող վերաբերմունքը էապես պայմանավորված էր ուսուցչի անձով: Քրիստոնեական խմբերը չեն հաղորդել դասարանում ծայրահեղ խտրականության դեպքերի մասին: Դեպքերը, որոնք քրիստոնեական խմբերը համարում էին աննշան, ինչպիսին է օրինակ՝ ուսուցչի ոչ բարեհաճ ընկալվող վերաբերմունքը պայմանավորված աշակերտի կրոնով, կարգավորվել են ծնողների ու դպրոցների մակարդակում, ինչպես նշում են այդ խմբերը: Կրոնական կազմակերպություններից շատերը մատնանշում էին, որ դասասենյակում խտրականություն ավելի հաճախ տեղ է գտնում Երևանից դուրս գտնվող դպրոցներում, որտեղ կրոնական բազմազանության նկատմամբ հանդուրժողականությունն ըստ նրանց պակաս տարածված է:

ՀԿ-ները, այլ կրոնական կազմակերպությունները, աթեիստները, ՀԱԵ-ի ոչ հավատացյալ անդամները շարունակել են հրապարակային մտահոգություններ հայտնել Հայոց եկեղեցու պատմության առարկայում իրենց որակմամբ կրոնական ինդոկտրինացիայի տարրերի առկայության վերաբերյալ, ինչպես նաև ՀԱԵ-ի հետևորդ լինելն ազգային ինքնությանը նույնացնող նյութերի վերաբերյալ: Եղել են հաղորդումներ, որ որոշ դպրոցներում առարկան դասավանդվել է ՀԱԵ-ի հոգևորականների կողմից և դասերի շրջանակում պահանջվել են այցելություններ ՀԱԵ եկեղեցիներ՝ առանց այլ հավատքներ քննարկելու կամ աշակերտների կողմից ՀԱԵ-ի կառույց չհանդիսացող կրոնական վայրեր այցելելու հնարավորության: Ըստ կառավարության՝ 2018-19 ուսումնական տարում (սեպտեմբեր-մայիս) ՀԱԵ-ի հոգևոր դասի ներկայացուցիչները Հայոց եկեղեցու պատմություն դասավանդել են բոլոր դպրոցների մեկ տոկոսից էլ պակաս մասում: Ըստ Եվրասիա համագործակցություն հիմնադրամին (ԵՀՀ) տրամադրված պաշտոնական տեղեկատվության ՀԱԵ հոգևոր դասի ներկայացուցիչները Հայոց եկեղեցու պատմություն դասավանդել են 6 դպրոցներում, որոնցից 4 հանրակրթական էին, 2-ը՝ մասնավոր:

Ըստ լրատվական հաղորդումների Հայոց եկեղեցու պատմության առարկայական ծրագիրը վերանայելու և այն առավել ընդգրկուն Կրոնների պատմություն առարկայով փոխարինելու կառավարության պլանները թեժ բանավեճի տեղիք տվեցին, իսկ առավել ավանդական խմբերն այս պլանները որակեցին որպես հարձակում հայկական ինքնության վրա և նշում էին, որ առարկայի դասավանդումը անհրաժեշտ է, որպեսզի հնարավոր լինի կանգնեցնել «աղանդների» տարածումը: Նոյեմբերի 4-ին վարչապետ Փաշինյանը ֆեյսբուքյան ուղիղ ելույթում քննարկեց Հայոց պատմություն առարկայի հարցը՝ վիճարկելով Հայոց եկեղեցու պատմության առանձնացումը Հայ ժողովրդի պատմություն առարկայից: «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Արշակ եպիսկոպոս Խաչատրյանն ասաց, որ Եկեղեցու դիրքորոշմամբ Հայոց եկեղեցու պատմությունը պետք է մնա առանձին առարկա: Նույն հոդվածում պատմաբան Վահրամ Թոքմաջյանն

ասաց, որ Հայոց եկեղեցու պատմության դասավանդման հարցի քննարկումը «կեղծ օրակարգ» է, քանի որ նախքան հանրակրթական առարկայացանկում որևէ նշանակալի փոփոխություն կատարելը պետք է ընդունվեն նոր կրթական չափորոշիչներ, որը ժամանակատար գործընթաց է, որը լավագույն դեպքում կտևի մինչև 2021-22թթ.: Որոշ դիտորդներ նշում էին, որ Հայոց եկեղեցու պատմություն առարկայի վերաբերյալ քննարկումները օգտագործվում էին կառավարության ընդդիմադիրների կողմից՝ հասարակական կարծիքը շահարկելու նպատակով:

Ըստ ԵՀՀ-ի Հայոց եկեղեցու պատմություն առարկայի հետ կապված մտահոգության տեղիք են տալիս հետևյալ երևույթները. դասերի ընթացքում ծիսակարգերի կամ կրոնական ծեսերի անցկացում, քարոզչություն և ատելության սերմանում ՀԱԵ-ից զատ այլ կոնական կազմակերպությունների նկատմամբ, ազգային ու կրոնական ինքնության նույնացում, այլ կարծիքների նկատմամբ անհանդուրժողականության սերմանում, ստեղծարար ու քննադատական մտածողության խոչընդոտների ստեղծում: Ըստ որոշ փոքրամասնական կրոնական խմբերի ՀԱԵ-ից զատ այլ կրոնական խմբերի նկատմամբ նմանատիպ անհանդուրժողականություն, այդ թվում նաև՝ փոքրամասնական կրոնների նկատմամբ վիրավորանքներ, տեղ են գտել նաև բուհերում:

2012թ. Կրթության նախարարության կողմից մեկնարկած ծրագրի հիման վրա դպրոցների տնօրինությունները դեռևս իրավասու էին 2-ից 4-րդ դասարաններում ներառել հավելյալ առարկա, որը կոչվում է Հայոց եկեղեցու պատմություն/քրիստոնեական դաստիարակություն: Նոր ուսումնական տարվա ընթացքում այս տարբերակով առաջնորդվել է 74 դպրոց, ճիշտ այնքան, ինչքան նախորդ տարում:

Ըստ կառավարության ինչպես և 2018թ-ին զորամասեր այցելելու հայտեր ՀԱԵ-ից զատ որևէ այլ կրոնական խումբ չի ներկայացրել: Զինված ուժերի հոգևոր առաջնորդության ծրագիրը, որ պաշտպանության նախարարության և ՀԱԵ-ի համատեղ նախաձեռնությունն է, շարունակում է այդ ծրագրում ներգրավել միայն ՀԱԵ-ի հոգևորականներին:

Ըստ Արդարադատության նախարարության պաշտոնական տեղեկատվության կալանքի տակ գտնվողների ու դատապարտյալների հոգևոր կարիքները բավարարելու համար ՀԱԵ հոգևորականները կանոնավոր այցելել են քրեակատարողական հիմնարկներ, անցկացրել մկրտություններ, պատարագներ և նշել տոները: Տարվա առաջին 9-ն ամիսների ընթացքում բանտարկյալների հետ հոգևոր զրույցներ ունենալու նպատակով Ռուսական ուղղափառ եկեղեցու, Եհովայի վկաների, Հայ ավետարանական եկեղեցու ներկայացուցիչներն այցելել են քրեակատարողական հիմնարկներ համապատասխանաբար 7, 4 և 17 անգամ:

Մարտի 12-ին մարդու իրավունքների հարցեր լուսաբանող Epress.am անկախ առցանց լրատվականը «Բանակը դարձի է բերում աթեիստներին» վերտառությամբ մի հոդված հրապարակեց: Հոդվածը վերատպել էր ֆեյսբուքյան օգտատիրոջ կողմից

հրապարակված հարցաշարը, որն ըստ հաղորդումների լրացնելու համար տրամադրվում էր ապագա զորակոչիկներին զինկոմիսարիատներում: Հարցերից մեկը հետևյալն էր. «կրոնական պատկանելությունը. եթե պատկանում եք կամ հարում եք որևէ կրոնական աղանդի, դավանանքի, խմբակցության կամ կազմակերպության. նշվում է նաև որ թվից, ինչպես նաև ընտանիքի անդամներից ովքեր են դավանում նշված կամ այլ հավատքի, եթե ոչ, լրացվում է որպես Հայ առաքելական եկեղեցուն դավանող»: Կառավարությունն ուղղակիորեն չարձագանքեց այս հրապարակմանը, սակայն նշեց, որ Պաշտպանության նախարարությունը չի կազմակերպել քննարկումներ և չի պահանջել տեղեկություններ նորակոչիկների կրոնական պատկանելության վերաբերյալ:

Փետրվարի 19-ին Կրոնի և իրավունքի կենտրոնը Վայոց Ձոր մարզի Ելփին համայնքի մի ուսուցչի անունից դատական հայտ ներկայացրեց դպրոցի տնօրինության դեմ՝ պահանջելով չեղարկել 2017թ. տնօրինության որոշումը, որով կրճատվել էին ուսուցչի դասարաններն ու դասաժամերը, վճարել աշխատավարձը անցած ժամանակահատվածի համար և ընդունել նրա նկատմամբ կրոնական հողի վրա դրսևորված խտրականության փաստը: Ըստ Կրոնի և իրավունքի կենտրոնի ուսուցչի հանդեպ կրոնական հողի վրա խտրականություն էր դրսևորվել այն բանից հետո, երբ աշակերտների ծնողները նրան մեղադրել էին «աղանդավոր» լինելու մեջ, քանի որ նա ավետարանական քրիստոնեական եկեղեցու անդամ էր: Ծնողները սկզբում արգելեցին իրենց երեխաներին մասնակցել այդ ուսուցչի դասերին՝ վախենալով, որ նա կարող է քարոզչություն իրականացնել: Տնօրենի պաշտոնակատարը ժամանակավորապես վերականգնեց ուսուցչի դասաժամերը՝ չնայած համայնքից եկող ճնշումներին, այդ թվում սպառնալիքներին, որ նա չի ընտրվի մշտական հիմունքներով դպրոցի տնօրենի պաշտոնում, քանի դեռ չի հեռացրել այդ ուսուցչին: Դեկտեմբերի սկզբի դրությամբ այդ ուսուցիչը շարունակում էր դասավանդել դպրոցում, և տնօրենի պաշտոնակատարը կարողացել էր համոզել ծնողներին, որպեսզի երեխաները հաճախեն նրա դասերին:

Ըստ Կրոնի և իրավունքի կենտրոնի 2018թ. հոկտեմբերին ոստիկանապետը աշխատանքից ազատեց ոստիկանության երկարամյա ծառայող Էդգար Կարապետյանին այն հիմքով, որ նա հաճախում էր ավետարանական քրիստոնեական եկեղեցի և ըստ ոստիկանության հանդիսանում էր կրոնական կազմակերպության անդամ, թեպետ կրոնական կազմակերպությունների կողմից ընդունված չէր անդամների հաշվառումը: Ըստ տեղական դիտորդների նույն իրավական սահմանափակումները ՀԱԵ անդամների դեպքում չէին կիրառվում: Կրոնի և իրավունքի կենտրոնը վարչական դատարանում բողոքարկեց Կարապետյանի աշխատանքից ազատելու հարցը՝ պահանջելով վերականգնում աշխատանքում, աշխատավարձի վճարում անցած ժամանակահատվածի համար և նրա հանդեպ կրոնական հիմքի վրա խտրականություն դրսևորելու փաստի ճանաչում դատարանի կողմից: Վարչական դատարանը կասեցրեց գործը և դիմեց Սահմանադրական դատարան ոստիկանության մասին օրենքի համապատասխան հոդվածների սահմանադրականության հարցով: Սեպտեմբերի 13-ին Սահմանադրական

դատարանը գործն ընդունեց վարույթ: Տարեվերջի դրությամբ գործով վճիռ դեռևս կայացված չէր:

Այլ փոքրամասնական խմբերից կային հաղորդումներ այն մասին, որ հանրային հատվածում աշխատանք փնտրող իրենց անդամների հանդեպ դրսևորվում էր խտրականություն: Հանրային ծառայության մեջ գտնվող կամ իրավապահ մարմիններում աշխատող որոշ անհատներ նշում էին, որ խուսափում են իրենց կրոնական պատկանելության մասին հայտնել աշխատավայրում և մասնակցել եկեղեցական ծիսակարգերի, քանի որ վախենում են կորցնել իրենց աշխատանքը:

Թեպետ երկրից դուրս գտնվող հոգևոր կենտրոններից կրոնական կազմակերպություններին ֆինանսավորում տրամադրելն արգելող իրավական դրույթի կիրառման մեխանիզմ չկար, սակայն մի շարք կրոնական կազմակերպություններ փաստել են, որ հարգել են այդ արգելող դրույթը և սահմանափակել իրենց գործունեությունը, քանի որ չեն ցանկացել խախտել օրենքը:

Եհովայի վկաները նշում էին, որ շարունակում են դժվարությունների բախվել պաշտամունքային վայրեր կառուցելու հարցում, քանզի ամբողջ երկրում այդ հարցին միջամտում են տեղական պաշտոնյաները: Տարեվերջի դրությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ընթացքի մեջ էին մնում երեք գործ՝ կապված Եհովայի վկաների սեփականության իրավունքով պատկանող տարածքներում պաշտամունքային վայր կառուցելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի արգելքի հետ: Այլ կրոնական փոքրամասնական խմբեր նույնպես հայտնել են անհրաժեշտ թույլտվություններ ստանալու հետ կապված խնդիրների մասին և նշել ՀԱԵ-ի ոչ պաշտոնական դերը այս թույլտվությունների արգելափակման հարցում: Ըստ որոշ խմբերի նոր պաշտամունքային վայր կառուցելու դժվարություններով պայմանավորված, նրանք փոխարենը գնել են գոյություն ունեցող շինություններ և հարմարեցրել դրանք իրենց համայնքի կրոնական կարիքներին:

Տարեվերջին այլընտրանքային քաղաքացիական ծառայություն էին անցնում Եհովայի վկաների 129 հետևորդ, իսկ 2018թ. նրանց թիվը կազմում էր 123 հոգի: Այլընտրանքային ծառայությունը ներառում էր զբաղվածություն տարբեր հիվանդանոցներում, տեղական կոմունալ ծառայություններում, կանաչապատման աշխատանքներում և այնպիսի հաստատություններում, ինչպիսիք են՝ գիշերօթիկ դպրոցները, տուն-ինտերնատներն ու մանկատները: Ըստ կառավարության աղբյուրների այս ծրագրերին մասնակցողները միայն Եհովայի վկաներն են, որոնցից ոչ մեկը չի ընտրում այլընտրանքային զինվորական ծառայություն (մարտական հերթապահության, զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ չկապված զինվորական ծառայություն):

Հունվարի 29-ին վարչապետ Փաշինյանի որոշմամբ ստեղծեց աշխատանքային խումբ, որը զբաղվելու էր կառավարության և ՀԱԵ հարաբերությունների հարցերով: Աշխատանքային խումբը ղեկավարում էր վարչապետի աշխատակազմի ղեկավարը, իսկ կազմում ընդգրկված էին արդարադատության, պաշտպանության, կրթության

փոխնախարարներ և պաշտոնյաներ այլ նախարարություններից և մարմիններից, ինչպես նաև հինգ ներկայացուցիչ ՀԱԵ-ից, այդ թվում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: Մայիսի 3-ին տեղի ունեցած աշխատանքային խմբի առաջին նիստում համանախագահեցին վարչապետ Փաշինյանը և Ամենայն հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ. Տ.Գարեգին II-ը: Վարչապետը նշեց ՀԱԵ-ի առանձնահատուկ դերը ազգային ինքնության պահպանության հարցում և ասաց, որ աշխատանքային խումբը քննության կառնի պետության և Եկեղեցու հարաբերությունները և կքննարկի այնպիսի հարցեր, ինչպիսիք են հարկումը և Հայոց եկեղեցու պատմություն առարկայի դասավանդումը դպրոցներում:

Մայիսի 24-ին վարչապետ Փաշինյանը մասնակցեց Երևանում անցկացվող ԵՀՀ-ի տարածաշրջանային համաժողովին նվիրված Հայաստանում, Վրաստանում և աշխարհում կրոնի կամ համոզմունքի ազատության արդի հիմնախնդիրներին: Վարչապետը շեշտեց կրոնի ազատության նկատմամբ լիարժեք հավատարմությունը կառավարության կողմից: Իր ողջույնի խոսքում նա ասաց. «Կրոնի ազատությունը, Աստծուն հավատալու ազատությունը, առաջին հերթին ամեն մարդու ինքն իրեն հավատալու ազատությունն է»:

Հուլիսին արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանը մասնակցելով Վաշինգտոնում տեղի ունեցող կրոնական ազատության հարցերով նախարարական համաժողովին նշեց. «Հայաստանն ապաստան է դարձել կրոնական մի շարք խոցելի փոքրամասնությունների, մասնավորապես՝ եզդիների և ասորիների համար: Այսօր եզդիները Հայաստանի զորեղ փոքրամասնությունն են, և մենք շատ հպարտ ենք, որ այս հինավուրց ժողովուրդն իր հայաստանյան հայրենիքում կբացի ամենամեծ տաճարը»:

Սեպտեմբերի 29-ին Արմավիրի մարզի Ակնալիճ ոչ մեծ համայնքում բացվեց աշխարհում ամենամեծ եզդիական Քուբա Մեր Դիվան տաճարը: Բացման միջոցառման ժամանակ հանդես գալով՝ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը նշեց. «Խորհրդանշական և տրամաբանական եմ համարում, որ աշխարհում ամենամեծ եզդիական տաճարը գտնվում է հենց Հայաստանում: Հայաստանը տուն է եզդի ժողովրդի համար: Եզդի ժողովրդի զավակներն իրենց հայ եղբայրների կողքին են եղել բազմաթիվ օրհասական և հերոսական պահերի»: Տաճարի բացման ժամանակ հարցազրույց տված շատ եզդիներ նշում էին, որ սրբատեղի կառուցումը եզդիական մշակույթի պահպանությանն ուղղված կարևոր քայլ է, իսկ ոմանք էլ նշում էին, որ տաճարի բուն նպատակը, թերևս, զբոսաշրջիկների ներգրավումն է: Մի ընտանիքի մասնավոր ներդրմամբ մասնավոր հողատարածքում կառուցված այս տաճարը տարվա ընթացքում եզդիական թաղումների անցկացման վայր ծառայելուց զատ, ներգրավել է նաև զբոսաշրջիկների:

# ՄԱՍ III. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐԳԱՆՔԸ ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Ըստ մի շարք փոքրամասնական կրոնական խմբերի, մասնավոր լրատվամիջոցների բացասական պատկերները և ատելության խոսքը շարունակում էին մնալ իրենց համայնքների առջև ծառացած ամենադժվար խնդիրներից: Որոշ խմբեր զեկուցել են մասնավոր հեռարձակող լրատվամիջոցների կողմից իրենց միջոցառումների լուսաբանումն ապահովելու դժվարությունների և խմբագիրների դժկամության մասին հարցազրույց վերցնել ՀԱԵ-ից բացի այլ կրոնական խմբերի ղեկավարներից՝ իրենց հայացքների և գործունեության մասին: Մեկ այլ կրոնական փոքրամասնական խումբ հայտնում էր, որ իրենց անդամների համար հավատքը ազատորեն կիրառելու ամենազգալի խոչընդոտը հասարակական և ընտանեկան ճնշումներն էին:

Ըստ դիտորդների սոցիալական հարթակներում հայտնվել են խիստ վիրավորական հակասեմական գրառումներ, որոնք որոշ դեպքերում զուգորդված են եղել ծաղրանկարներով, որտեղ հրեաները վիրավորական կերպով են ներկայացվել: Վիրավորական գրառումները հատկապես տեղ են գտել հակակառավարական անանուն օգտատերերի ֆեյսբուքյան գրառումներում, որոնք թիրախավորել են միջազգային մի հիմնադրամի հրեա ղեկավարին: Որոշ գրառումներում մեկնաբանություններ են եղել հայ ժողովրդի դեմ ուղղված «թուրք-հրեա-մասոնական» դավադրության վերաբերյալ:

Նոյեմբերի 26-ին Արարատյան Հայրապետական Թեմի եկեղեցիներից մեկի կայքում ՀԱԵ քահանայի կողմից «Աղանդներ» վերտառությամբ հոդված էր հրապարակվել, որտեղ նա անդրադարձ էր կատարում մի շարք կրոնական խմբերի, այդ թվում՝ Հիսուս Քրիստոսի եկեղեցուն, Եհովայի վկաներին, Յոթերորդ օրվա ադվենտիստներին, հիսունականներին, բողոքականներին և մյուսներին՝ դրանք բնորոշելով որպես «աղանդներ»: Ըստ քահանայի «աղանդավորական կազմակերպությունները վնասում են մեր ազգին՝ բաժանումներ ստեղծելով ժողովրդի մեջ, հեռացնելով նրանց Սուրբ եկեղեցուց և մեր նախնիների իրական հավատքից»:

Կրոնական փոքրամասնական մի խմբի հաղորդմամբ ՀԱԵ քահանան, որը 2018թ. Սեպտեմբերին «ավետարանական աղանդին» մեղադրեց երկրի պետականության կորստյան և երկրի պատմական թշնամու՝ թուրքերի հետ աշխատելու համար, շարունակում էր տարվա ընթացքում մուտք գործել հանրակրթական դպրոցներ: Քահանան աշակերտներին հորդորում էր չհաճախել ավետարանական քրիստոնեական եկեղեցիների կազմակերպած կիրակնօրյա դպրոցներ, չնայած ըստ հաղորդումների ՀԱԵ-ից նրան խորհուրդ էին տվել նման հորդորներ չինչեցնել:

Ըստ լրատվական վերլուծաբանների 2018թ. իշխանությունից զրկված նախկին իշխանությունների հետ կապեր ունեցող կամ նրանց համակրող մասնավոր անձիք շարունակել են օգտագործել կրոնական խնդիրները կառավարությանը պարսավելու նպատակով: Ըստ լրատվական և կրոնական ազատության հարցերով փորձագետների

այդ անհատներն օգտագործել են տարբեր կայքեր, հակասական բլոգներ, տրոլինգ, կեղծ ֆեյսբուքյան խմբեր և կեղծ պատմություններ՝ տարածելու այն գաղափարը, որ հեղափոխությունը իրականացրել են փոքրամասնական կրոնական խմբերը կամ «աղանդները» (սովորաբար ՀԱԵ-ից զատ ցանկացած խումբ այսպես է որակվում):

ԱԱԾ շարունակում էր կրոնական ատելություն հրահրելու մեղադրանքով 2018թ. հարուցված քրեական գործը 2018թ. ստեղծված ֆեյսբուքյան մի էջի առնչությամբ, որն ըստ ստեղծողների իբրև կապված էր և «Կյանքի խոսք» եկեղեցու և վարչապետի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ: Ըստ «Կյանքի խոսք» եկեղեցու ներկայացուցիչների այդ ֆեյսբուքյան էջը տեղադրել էր Եկեղեցու ավագ հովվի լուսանկարը՝ կցելով հակահայկական և հակա-ՀԱԵ հայտարարություններով հոդված, որը Եկեղեցու դեմ հանրային մեծ աղմուկի պատճառ դարձավ: Ապրիլի 8-ին այս գործով մեղադրանք առաջադրվել իրանահայ երկքաղաքացի Արմեն Աբիին. տարեվերջի դրությամբ քննությունը դեռ ընթացքի մեջ էր:

Ըստ Եհովայի վկաների իրենց անդամների նկատմամբ կրոնական համոզմունքները հրապարակավ դրսևորելու ընթացքում եղել են բառացի վիրավորանք հասցնելու դեպքեր: Տարվա ընթացքում եղել են նման վիրավորանքի 16 դեպք, 2018թ. եղել է նման 12, իսկ 2017թ.՝ 32 դեպք: Որոշ դեպքերում անհայտ անձինք շուռ են տվել և վնասել խմբին պատկանող գրականության սայլակները: Ըստ Եհովայի վկաների ոստիկաններն օպերատիվ արձագանքել են և նախազգուշացրել՝ հարձակվողների ինքնությունը հայտնի լինելու դեպքերում, ինչի շնորհիվ նախորդ տարիների համեմատ նվազել է միջադեպերի թիվը: Որոշ այլ կրոնական խմբեր հայտնել են տեղի համայնքի ներկայացուցիչների կողմից ոտնձգությունների եզակի դեպքերի մասին, այդ թվում դեպքեր, երբ հարձակման ենթարկվածներն ասել են, որ տեղացիները նրանց շփոթել են Եհովայի վկաների հետ:

Կա մեկ շիա մզկիթ, որը գտնվում է Երևանում և սպասարկում է մահմեդական բոլոր խմբերին:

## ՄԱՍ IV. ԱՄՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դեսպանը և դեսպանության մյուս ներկայացուցիչները շարունակել են պետական պաշտոնյաների հետ հանդիպումների ընթացքում խթանել կրոնական հանդուրժողականությունն ու միջդավանական երկխոսությունը: Դեսպանը և դեսպանության մյուս ներկայացուցիչները բարձրացրել են հաղորդումների համաձայն փոքրամասնական կրոնական խմբերի դեմ դրսևորված խտրականության, այդ թվում՝ դպրոցներում կրոնական կրթության հարցը: Դեսպանության ներկայացուցիչները հետևել են բահայի համայնքի ներկայացուցչի դատավարությանը, որի գործն ըստ խմբի կրոնական հիմքերով է պայմանավորված:

Դեսպանը պարբերաբար հանդիպել է կառավարության, կուսակցությունների, սոցիալական խմբերի և կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներին՝ քննարկելու կրոնական փոքրամասնությունների հանդեպ դրսևորվող խտրականության հարցերը, նպաստելու կառավարության ու կրոնական փոքրամասնությունների միջև երկխոսությանը և դիտարկելու հիմնահարցերի համատեղ լուծումները: Օգոստոսին դեսպանը միջկրոնական երկխոսությանը, փոխադարձ հարգանքին և համագործակցությանն աջակցելու նպատակով ընդունելություն կազմակերպեց կրոնական և էթնիկ փոքրամասնությունների, քաղաքացիական հասարակության և կառավարության ներկայացուցիչների համար՝ քննարկելով մտահոգությունները և նպաստելով խմբերի միջև երկխոսությանը:

Սեպտեմբերի 17-ին դեսպանը կենտրոնական ու տեղական իշխանությունների ներկայացուցիչների հետ միասին տոնեց ԱՄՆ կառավարության ֆինանսավորմամբ իրականացված մշակութային պահպանության ծրագրի ավարտը Սյունիքի մարզի Մեղրի համայնքում: 2016թ. մեկնարկած այդ ծրագրով պահպանության աշխատանքներ էին իրականացվել ՀԱԵ-ին պատկանող Սուրբ Հովհաննես եկեղեցու առավել վտանգված հատվածներում և վերականգնվել էին եկեղեցում գտնվող 17-րդ դարի որմնանկարները, որոնք առանձնանում են հայ-պարսկական եզակի ոճով:

Դեսպանն հանդիպել է ՀԱԵ-ի առաջնորդների հետ՝ նրանց մասնակից դարձնելու կրոնական փոքրամասնությունների կողմից իրենց հավատքին առանց սահմանափակումների դավանելու իրավունքի իրացմանն աջակցելու գործին:

Դեսպանության պաշտոնյաները մասնակցել են ԵՀՀ-ի կողմից պարբերաբար կազմակերպվող խտրականության բացառման, ազգային կրոնական փոքրամասնությունների ու կրոնական հանդուրժողականության հարցերին նվիրված համաժողովներին ու քննարկումներին, այդ թվում՝ Երևանում անցկացված տարածաշրջանային համաժողովին, որը նվիրված էր Հայաստանում, Վրաստանում և աշխարհում կրոնի կամ համոզմունքի ազատության արդի հիմնախնդիրներին: Դեսպանության պաշտոնյաները նաև ընդգրկված էին ԵՀՀ-ի ամենամյա լրագրողական մրցանակի ժյուրիի կազմում և մասնակցել են փետրվարի 26-ին մրցանակաբաշխության արարողությանը, որի նպատակն է աջակցություն հայտնել կրոնական հանդուրժողականությանը մամուլում:

Հոկտեմբերին դեսպանության պաշտոնյաներն այցելեցին Արմավիրի մարզում գտնվող ասորական համայնք, իսկ դեկտեմբերին՝ Ակնալիճ համայնքում գտնվող եզդիական նոր տաճարը: Նրանք պարբերաբար հանդիպել են ՀԱԵ-ի ու կրոնական և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ, այդ թվում ավետարանական քրիստոնյաների և այլ բողոքականների, Եհովայի վկաների, Հիսուս Քրիստոսի եկեղեցու հետևորդների, եզդիների, հրեական համայնքի, առաքելական ասորիների, հիսունականների, բահայիների, ինչպես նաև անհատ մահմեդականների հետ: Այս հանդիպումներում դեսպանատան պաշտոնյաները և կրոնական խմբերի ներկայացուցիչները քննարկել են կրոնի ազատության մասով երկրում տիրող

իրավիճակը, այդ թվում փոքրամասնական կրոնական խմբերին մտահոգող հարցերը: Նրանք նաև հանդիպել են քաղաքացիական հասարակության խմբերի հետ՝ քննարկելու նրանց մտահոգությունները կապված հանրակրթական դպրոցներում Հայոց եկեղեցու պատմության դասավանդման հետ, ինչպես նաև կրոնական ազատության նկատմամբ հարգանքի կարևորությունը երկրում:

Դեսպանությունն օգտագործել է սոցիալական հարթակները, այդ թվում՝ թվիթերյան և ֆեյսբուքյան հարթակները՝ հղելու ուղերձներ ի նպաստ կրոնական բազմազանության և հանդուրժողականության: